

## ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԱՏԱՌ- ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հասմիկ Ստեփանյան

Հայատառ թուրքերեն գրականությունը մեր մշակութային ժառանգության անքակտելի մասն է, որը մինչ օրս շատ քիչ է ուսումնասիրված: Այն իր մեջ ներառում է հսկայական վավերագրական նյութ Օսմանյան կայսրության պատմության, նրա ժողովուրդների լյանքի բոլոր ոլորտների մասին: Այն նաև մեր ազգային ազատագրական շարժման փայլուն էջերի ու եղերական շրջանների վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր է, որը չպետք է անուշադրության մատնվի ուսումնասիրողների կողմից:

Ժեռագրական 600-ամյա ու տպագրական 250-ամյա պատմություն ունեցող այս գրականությունն ապացույցն է ողբերգական մի երևույթի, որն այնքան տարածված էր ողջ Օսմանյան կայսրությունում: Այն վկայությունն էր սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական մոլեսանդ հետապնդումների հետևանքով բռնի թուրքալեզու դարձած հայ ժողովուրդի ավելի քան կես միլիոն մի հատվածի գոյության: «Մեկ ազգ, մեկ կրոն» սովորական կարգախոսի քաղաքականության առաջին քայլերից մեկը (հպատակ տարբեր ժողովուրդների դեմ իրականացվող պարբերական ջարդերին զուգահեռ)՝ մահվան սպառնալիքով թուրքախոս դարձնելու, մասսմբ պասկել էր հաջողությամբ: Այս սովար հատվածի ողջ ստեղծագործական միտքը մեզ է հասել մասսմբ կամ լիովին հայատառ թուրքերենով: Հայատառ թուրքերենը մեծ առաքելություն ունեցավ նրանց ուժացումից փրկելու, հայկական ինքնությանը վերաբարձնելու, հայախոսությունը վերականգնելու և առաքելական կրոնին հավատարիմ մնալու գործում: Հայատառ թուրքերենով ստեղծվեց հսկայածավալ ձեռագիր ու տպագիր գրականություն, որը հետագայում այնքան տարածվեց ու ինքնարավ դարձավ, որ սկսեց ծառայել ոչ միայն իր սկզբնական առաքելությանը, այլև դարձավ կարևոր մշակութային գործոն հայերենին ու թուրքերենին տիրապետող օտարերկրացիների համար:

Հայատառ թուրքերենով իրատարակված 2000-ից ավելի անուն գրքերը, ավելի քան 120 անուն պարբերական մամուլն այնպիսի հարուստ ու հզոր ուժ դարձան, որ ակամա սկսեցին ազգել կայսրության ողջ թուրքախոս բնակչության մշակույթի վրա: Դա Օսմանյան կայսրությունում ընդհանուր զարթոնքի շրջանի բուսն զարգացման խթանը հանդիսացավ, դառնալով նաև եվրոպական իրականության, մթնոլորտի, մշակույթի, առաջադիմական գաղափարների ներթափանցման գործիք և միջոց:

Պետք է փաստել, որ ամենամեծ օգուտն այս գրականությունից ունեցավ նախևառաջ թուրք ժողովուրդը: Հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումները ողջ կայսրությունով մեկ հեղափոխական նշանակություն ունեցան և մշակութային և զաղափարախոսական առումով, ինչպես նաև գիտության, տեխնիկայի, գրական նոր թուրքերենի, լուսավորական գրականության ու նրա գործիքների կազմակերպման, օսմանյան լրագրողական արվեստի, երաժշտության ու թատրոնի, կյանքի ամենատարբեր ճյուղերի զարգացման տեսանկյունից: Կայսրության բոլոր անկյուններում, սկսած պալատական պաշտոնյաներից մինչև զավառի այլազգիները, նախընտրում էին կարդալ այս պարզ ու հասկանալի լեզվով մամուլ՝ սեղմ ժամկետում սովորելով հայկական տառերը:

Հայատառ թուրքերենի ժողովրդականությունը պայմանավորված է եղել ժամանակի ամենազարգացած մարդկանց գործունեությամբ: Հրաշալի կրթություն ստացած, բազմաթիվ լեզուների գիտակ այս գործիքներն իրենց ուսերին էին վերցրել Օսմանյան կայսրության բազմակեզու պարբերականների տպագրության ողջ ծանրությունը. շուրջ երկու

հարյուր հայտառ թուրքերեն, օսմաներեն, եռալեզու, քառալեզու մամուլ, երկու տասնյակի հասնող ֆրանսերեն պարբերականներ: Եվ դրանք բաժանորդներ են ունեցել երկրի տարրեր ծայրերում ու արտասահմանում, թղթակիցներ ունեցել անգամ հեռավոր հայկական գավառներում: Հայտառ թուրքերեն գրքեր ու պարբերականներ կարդում էին պալատում, կառավարությունում ու պաշտոնական վայրերում, տարրեր ազգերի ընտանիքներում, սրճարաններում և անգամ հարեմներում: Հայտառ թուրքերեն պարբերականների մեծագույն արժանիքն այն էր, որ նորությունները (մանավանդ արտասահմանյան) 1-2 օր անց ընթերցողի սեղանին էին լինում: Իսկ հրապարակվում էին դրանք ֆրանսիական մամուլի օրինակով՝ ունենալով բազմաթիվ ենթավերնագրեր, որոնք ոչ մի բաց անկյուն չէին թողնում ընթերցողների հետաքրքրությունը բավարարելու հարցում: Ամենահայտնի պարբերականներից էին «Մանզումի Էֆքեար»-ը, «Մէնուայի Ախապար»-ը, «Մէնուայը Հավատիս»-ը, «Մինատիի Էրճիաս»-ը, «Թէրճմանը Էֆքեար»-ը, «Ճէրխտի Շարքի»-ը<sup>1</sup> և այլն: Այս դեպքում մեզ համար կարևոր են բոլոր այն խորագրերը, որոնք ներկայացրել են գավառը:

Նոյնքան կարևոր են գավառում լոյս տեսած պարբերականները, ինչպես՝ «Էնվարը Շարգիե» (Կարին), «Կիլզարը Գայսերիեի» (Կեսարիայի համար, սակայն տպագրվել է Պոլսում), «Մենտոր» (Այնթասպ) և այլն: Եթե նկատի ունենանք, որ հայտառ թուրքերեն պարբերականները շուրջ 40 տարի շարունակ հրատարակվում էին, ապա կարող ենք պատկերացնել այն հսկայական ծավալը, որն արևմտահայության ու Պոլսի ամենօրյա կյանքի յուրօրինակ մի հայելի էր, որում արտացոլվում էր առօրյան, մշակութային և հոգևոր կյանքը, նրա զարթոնքը, եվրոպականացման շարժման միտումները և այլն: Այն արտահայտել է բոլոր իրադարձությունները՝ տեղական և համակայսերական նշանակության:

Հայտառ թուրքերեն մամուլն իր բովանդակությամբ, իր խաղացած հասարակական-քաղաքական դերով անքակտելիորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ: Հայկական որոշ պարբերականներ անգամ ունեցել են հայտառ թուրքերենով հավելվածներ կամ տպագրել են հայտառ թուրքերենով հոդվածներ (նկատի ունենալով թուրքախոս ընթերցողներին), երբեմն էլ անփոփոխ ձևով ներկայացրել են թուրքերեն թղթակցությունը: Հայտառ այս պարբերականները հաճախ փակվել են, խմբագիրները՝ բանտարկվել: «Մանզումի Էֆքեար» թէրթի տնօրեն Կարապետ Փանոսյանը, որը բոլորից հետևողական է պայքարել հայ ժողովրդին ստրկացնելու, ջլատելու, ձուլելու քաղաքականության դեմ և տպագրել ծանրագույն փաստերով թղթակցություններ գավառից, բազմից բանտարկվել է, սակայն վերատին շարունակել իր գործը: Լոյս են տեսել հոդվածներ, որոնք աղմուկ են առաջացրել մայրաքաղաքի ոչ միայն հայկական, այլև եվրոպական դիվանագիտական շրջանակներում, կառավարությունում: Այդ պարբերականները լավագույն դեպքում կարողացել են վերաբացվել նախկին կամ նոր անվանմամբ՝ շարունակելով իրական մամուլի գործը: Եթե դրանց հավելենք Պոլսում մոտ երկու տասնյակ օսմաներեն ու եռալեզու, քառալեզու թէրթերը, նաև ֆրանսերենով լոյս տեսնող շուրջ մեկ տասնյակ պարբերականների նյութերը, որոնք հրատարակում էին հայերը, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ հարուստ նյութ է պարփակված հայտառ թուրքերեն մամուլի էշերում ազգային-ազատագրական շարժումների, հայ ժողովրդին պատուհասած կոտորածների վերաբերյալ, ինչպես նաև դրանց լուսաբանման և հետապնդման գործում:

<sup>1</sup> Հայտառ թուրքերեն գրքերի և պարբերական մամուլի մասին տես Ստեփանեան Յասմիկ Ա., Հայտառ թուրքերեն գրքերի և հայտառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությին. Ստամբուլ, «Թուրքուազ» հրատ., 2005թ.

## Հասմիկ Ստեփանյան

Նման ողբերգություն դարձավ 1909 թ. Աղանայի կոտորածը, որը նաև հայտառ թուրքերն մամուլի միջոցով իր բազմաթիվ մանրամասներով անմիջապես հրապարակ իշավ՝ ներկայացնելով փաստական հսկայական նյութ, որը հիմնականում օտարերկրյա դեսպանատների միջոցով տարածվեց արտերկրում:

Իսկ Աղանան այդ ժամանակ լուսավորական շարժման կենտրոններից էր: Այնտեղ մի քանի դասական նվազախմբեր էին գործում (1901 թ. առաջին հայկական նվազախումբը Սահակ Տեր-Սահակյանի ու Ալեքսան Չորեքչյանի ղեկավարությամբ և 1902 թ.՝ Վահան Բեղելյանի 13 երաժիշտներից դասական նվազախումբը), բազմաթիվ բարեսիրական, մշակութային միություններ ծնվում:

Երիտրուրքական հեղաշրջումից հետո (1908 թ.) հայտառ թուրքերն մամուլում, ավելի, քանի հայալեզու պարբերականներում, արտաստվել են արտասահմանյան, հիմնականում՝ ֆրանսիական, սովորական, հայկական շրջանակների տարրեր հանձնաժողովների գործունեության արդյունքները: Պատկառելի թիվ էին կազմում Արդու Համբիին նվիրված գրքերը այնպիսի բացասական վերնագրերով, ինչպես «Կարմիր գազանի որջը» (1909), «Կոշմարներ» և այլն: Այդ հրապարակումները ներառում էին նաև Պատրիարքարանի, Ազգային Ժողովի ատենագրությունները և Կիլիկիո որբախնամ ու այլ հանձնաժողովների տեղեկագրերը:

Լոյս տեսան հայերեն ու հայտառ թուրքերն գրքեր, որոնք հիմնականում հրատարակվեցին Եգիպտոսում, Ֆրանսիայում: Պոլսում տպագրվեցին գրքեր,<sup>2</sup> որոնց հասույթը տրամադրվեց Աղանայի ողբերին: Մեր գրեթե բոլոր անվանի մտավորականներն անդրադարձան այս խնդրին՝ գործուն մասնակցություն ունենալով «Կիլիկիոյ աղյուսակներում»:

Հարկ է նշել, որ մեր ժողովրդի ողբերգական շրջանների մասին հայերի ու օտարների տեղեկությունների բազմալեզու աղբյուրների կողմին պահպանվել են նաև հայտառ թուրքերներով նյութեր և վավերագրեր, որոնց մեծ մասը մինչ օրս:

Բազմաթիվ անգամներ առիթ ենք ունեցել համոզվելու, որ դեռ այսօր էլ սփյուռքահայ մեր հայրենակիցների օջախներում սրբությամբ են պահվում հայերեն, հայտառ թուրքերն լեզուներով ձեռագիր տեսրակներ, գրքեր, որոնք եղեռնն անցած տարաբախտ մեր հայրենակիցների կյանքի սև օրերի պատմություններն են: Դրանց մի մասը լույս է տեսել հենց ականատեսների, մյուս մասը՝ նրանց ժառանգների կողմից: Մեզ վիճակվել է նաև տեսնել մի քանի հայերեն ու հայտառ թուրքերեն ձեռագիր հուշագրություններ: Դրանց հեղինակների այսօրվա ժառանգները սրբությամբ են պահում դրանք՝ թարգմանելու, հրատարակելու համար:

Մատենադարանի ձեռագրական նոր հավաքածուի 361 համարի ձեռագիրը գրվել է Աղանայում, կոչվում է «Թուրքիադա էրմենի հայաթը» (Հայերի կյանքը Թուրքիայում): 1950-ական թթ. գրված երկմաս, 80 թերթից բաղկացած ձեռագիրը պատկանում է Լևոն Էպիկանի գրչին: Ձեռագիրը նվիրված է Աղանայի ողբերգական ղեպքերին: Առաջին մասը

2 Տես մի քանի գրքեր Աղանայի շարդերի մասին. Թապագեան Միհրան, Ալունայի ծննդեան ծառը, Կ.Պոլիս, 1910: Թէոդոր Արշակուի, Ամիս մը ի Կիլիկիա, Դատաստան, Կ.Պոլիս, 1910: Թէրզեան Յակոբ, Կիլիկիոյ աղլտոր, Կ.Պոլիս, 1912., տպ. Ասատորեան ո որդիք: Նոյնի՝ «Ալունայի կյանքը», 1909, Կ.Պոլիս: Գուտուլեան Գրիգոր. Հայ լեռ. Կարմիր Դրվագներ Կիլիկիոյ աղետէն. Կ.Պոլիս, Տպ. Տողրամաճյան, 1912: Մուշեղ Եպիսկոպոս, Աղանայի շարդը և պատասխանատունները, Կ.Պոլիս, 1909: Հակոբ Թէրզյան, Ալունայի կեանքը (Կ.Պոլիս, 1909): Սուրեն Պարթեւեանի, Կիլիկիան արհաւիրքը (Կ.Պոլիս, 1909): Ալանան Յարութիւն Աղնարապի, Խնչպէս դատուեց արդարութիւնը Ալունայի մէջ, 1909թ.: Հայատառ թուրքերներով, Պեհսնիլյան Ե., Նահատակների հուշագիրը, հայատառ թուրքերներով, Կ.Պոլիս, 1910: Զալյան Կ. Աղանայի ղեպքերը և պատասխանատունները, Կ.Պոլիս, 1910 թ. և այլն:

բաղկացած է երեք բաժինից, սուլթանների երկրում հայերի կյանքի ու Աղանայի զուլումի մասին: 47-րդ թերթից սկսվում է ձեռագրի երկրորդ մասը, որը չափածո՞ւ բաղկացած քաղել, դիվան, քոշմա... Բոլորն էլ անդրադառնում են հայկական ջարդերին: Այսպիսի եղերերգեր հնարավոր է գտնել Արևմտյան Հայաստանի մանավանդ թրրախոս շրջանների բանավոր ու գրավոր մշակույթում՝ հեղինակային կամ ժողովրդական: Հայատառ թուրքերենով հայտնի են նաև մի շարք այլ հրատարակություններ, այդ թվում չափած գործեր Այնթապի «պատերազմների» մասին:

Այսօր ախտսանքով պետք է նշել, որ մեր մշակույթի այս հատվածը բավարար ու սումնափակած չէ: Չուսումնասիրել հայատառ թուրքերեն մամուլը՝ նշանակում է լիարժեք չուսումնասիրել մեր ժողովրդի արևմտահայ հատվածի պատմությունը: Գուցե մենք ժամանակ և միջոցներ կգտնենք՝ մեր ազատազրական շարժումների պաթոսվ ու եղեռնազործությունների ցավից հյուսված արձակ ու չափած հայատառ թուրքերեն գրականության շարք հրապարակելու համար՝ դուրս հանելով այն ժամանակի ու մարդկության պատմական հիշողության մոռացությունից:

Hasmik Stepanyan

**The Representation of the Armenian Massacres in the Turkish Literature Written in Armenian Letters**

Summary

The author highlights the necessity of a research of the Turkish literature written in Armenian letters which includes the Armenian documentary material on the history of the Ottoman Empire, different spheres of its peoples life. He reverts to the role of Turkish in Armenian letters to save it from estrangement, to reestablish the Armenian originality and the speaking of the Armenian language and to be faithful to the apostolic religion. Information about the 1909 massacre in Adana spread in abroad through the Turkish press printed in armenian letters.